



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10633

658

7-39

" 51
p. 1038

150

2002

ՅԻՄՈՆ ԶԻՍՄԼԻՔՅԵԱՆ

ԱՌԱՋՆՈՐԳ

ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Կ Ա Մ


ՏԱՐԵՐՔ

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆ

Պատմութիւն վաճառականութեան եւ Ուսումնասիրութիւնը վաճառականութեան ամէն ճիւղերուն վրայ. — Առեւտրական Թրէնսպիտութիւն, Աշխարհագրութիւն, Տնտեսագիտութիւն. — Վաճառագիտութիւն: — Թղթակցութիւն Հայ. Տանկ. Գաղ. եւ Անգլ. լեզուներով. — Արհեստից եւ արհեստական նոր զիւտերու վրայ ծանօթութիւններ. — Առեւտրական, սակարանական եւ պանքայի հաշիւներ եւայլն.



Հասր Ա. — Տէր Գ.



Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

1901

ՀԱՇԻԻՆԵՐՈՒ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Հաշուակալ ու Տոմարակալ. — Հաշուակալութիւնը գիտութիւն մ'է, կամ ամբողջութիւն մը ծանօթութիւններու որ կը կայանայ վաճառատան մը բոլոր գործառնութիւններն ի գիր առնելու, գրուածները դասաւորելու, հակակշռելու և յետոյ անոնցմէ հետեւութիւն մը, արդիւնք մը հանելու մէջ: Աւելի յստակութեան համար, այս գրութիւնները կը պատկերանան հաշիւներու մէջ, զի հաշիւներն աւելի լաւ կը յարմարին դասաւորութեան, հակակշռի, խտնուորդի: Ուրեմն կրնանք ըսել թէ հաշուակալութիւնը հաշիւներու գիտութիւնն է, որ հիմնուած է բացարձակ կանոններու վրայ, և ո՛չ թէ սկզբունքներու, փորձառութիւններու և այնպիսի կիրարկութիւններու վրայ, որոնք պարագային համեմատ կը փոխուին: Հաշուակալութեան օրէնքներն առհասարակ կը պատշաճին ամէն տեսակ գործողութիւններու: Տոմարակալութիւնը հաշուակալութեան մէկ կամ մի քանի մասերը կը բովանդակէ: Տոմարակալ է այն պաշտօնեան, որ տետրակի մէջ կ'ընդօրինակէ եկած կամ գացած հաշուեցոյցները: Տոմարակալ է նոյն իսկ անիկա որ նամակներու ընդօրինակութիւնը կ'առնէ: Ասոնց հաշուակալ չըսուիր, զի շատ հաւանաբար անգիտակ են հաշուակալութեան օրէնքներուն: Հաշուակալ չէ նաև այն պաշտօնեան, որ Օր-Հաշիւն ու Մայր-Հաշիւը կը բռնէ: Տոմարակալ մ'է պարզապէս որ միւս պաշտօնեաներէն քիչ մ'աւելի ծանօթութիւն կրնայ ունեցած ըլլալ հաշուակալութեան վրայ: Հաշուակալ է ան, որ կրնայ հաշիւները բռնել. ըստ կանոնի անցընել, հակակշռել, դասակարգել և արդիւնք մը հանել: Հաշուակալը տոմարներ կը կազմակերպէ ըստ կանոնի, և տոմարակալին ցոյց կուտայ իր կատարելիք աշխատութիւնը: Հետեւապէս իր պաշտօնն անկէ բարձր է: Հաշուակալը նմանցուցած են ճարտարապետի և տոմարակալը՝ որմնագիրի: Տոմարակալ մ'ըլլալու:

համար մաքուր գիր ունենալ և չորս գործողութիւնները գիտնալ կը բաւէ : Մաքուր գիր անհրաժեշտ չէ լաւ հաշուակալի մը, բայց պէտք է հիմնովին գիտնայ հաշուակալութիւնը, և տեսական ու գործնական ընդարձակ ծանօթութիւններ ունենայ : Պղտիկ վաճառատան մը մէջ թերեւս հաշուակալը միեւնոյն ժամանակ կրնայ տոմարակալի պաշտօնն ալ վարել, բայց մեծ վաճառատան մը մէջ իւրաքանչիւրին պաշտօնը պէտք է որոշ ըլլայ :


Հաշուակալութեան օգտակարութիւնը. — Հաշուակալութիւն մը ցոյց պիտի տայ վաճառատան մը ճշգրիտ կացութիւնը, գոյքն ու պարտքը, շահն ու վնասը : Անիկա տեսակ մը յիշատակագիրը կամ պատմութիւնն է վաճառատան մը կեանքին : Պիտի ցուցնէ թէ ո՞ր բանը լաւ մտածուած, լաւ առաջնորդուած է : Պիտի մատնանչէ յոռի շահադիտութիւնները կամ սխալ ուղղութիւնները : Վերջապէս ստոյգ տեղեկութիւններ և իմաստուն խորհուրդներ պիտի տայ բաղրօնին՝ յաջորդ տարի հետեւելիք ընթացքին վրայ : Հաշուակալութիւնը վաճառատան մը առաջնորդը, կողմնացոյցն է : Բայց որպէս զի իր տալիք տեղեկութիւններն յստակ, ճշգրիտ ու ապահով ըլլան, պէտք է որ բաղրօնն ինք լաւ հաշուակալ մ'ըլլայ [*] կամ ունենայ : Բաղրօնին հաշուակալութիւն գիտնալն ամէն պարագայի մէջ անհրաժեշտ է, վասն զի պէտք է որ ինք դատէ իր հաշուակալն ու անոր աշխատութիւնը, և չվստահի նուազ ապահով տեղեկութիւններու, որք կրնան աղետալի հետեւութիւններ ունենալ : Լաւ հաշուակալ ըլլալու համար պէտք է որ հաշուակալութեան գրութիւնը լաւ ըլլայ, այսինքն պարզ և ապահով : — Պա՞րզ : Դժուար չէ : Ծատ փոխադրութիւններ կան որ անօգուտ են : Զանոնք ջնջելով թէ՛ ժամանակի թէ՛ աշխատութեան խնայութիւն կ'ըլլայ : — Ապահով : Այո՛, հակակշիռները շտապներով և տարին մէկէ աւելի եկվանդէրներ պատրաստելով ամենադիւրին եղանակաւ :

[*] Բաղրօններու յստակ ծածկագիր հաշուակալութեան վրայ ալ պիտի խօսուի առանձինն :

Սերակացութիւն. — Լաւ հաշուակալութիւն մը անհրաժեշտ է : Հաշուակալութիւնը կրնայ աւելի պարզ վիճակի մը վերածուիլ և աւելի արագ, ստոյգ ու ապահով տեղեկութիւններ տալ : Այս ծրագիրը կատարելապէս իրագործելի է : Անոնք որ ձանձրութիւն առնեն կարգալ և մանաւանդ ուսումնասիրել ինչ որ յաջորդ տետրերու մէջ պիտի ըսուի այս խորագրին տակ, շուտով պիտի համոզուին :



ԹՈՒՐԳԻՈՅ ՎԱՃԱՌԱՇՍԱՀ ՔԱՂԱՔՆԵՐԸ



Ի Ս Կ Ե Ն Տ Ե Ր Ո Ւ Ն

Մովային քաղաք՝ Հալէպի վիլայեթին մէջ, Սուրիոյ հիւսիսային կողմը : Բնակիչ՝ վերի վերոյ 11,000 հոգի : Քաղաքը մասնակի կերպով կը թափուրնայ ամառները : Օտար հիւպատոսք իրենց բնակութիւնը կը փոխադրեն ի Պէյլան, 12 քիլոմէթր դէպի հարաւային արեւելք : Գլխաւոր ճարտարարուեստն է շերամատածութիւն : Տարին 40,000 քիլոկրամ խոզակ կը պատրաստուի, մօտ 15,000 ոսկի արծէքով : Այս գործին կը պարապին 1200 գործաւորներ, տարին 3 ամիս միայն : Տիարպէքիլի և Հալէպի հրապարակն ըլլալով, Իսկէնտէրուն դրանգիլի կարեւոր վաճառականութիւն մ'ունի : 1890 ին 1,063,000 Օսմ. ոսկիի արտածում ունեցած է : Արտածուած գլխաւոր վաճառքներն են բնիկ տարազագործութեան արտադրութիւններ, խամ մետաքս, բամբակ, բուրդ, գլխտոր (մազր), դեղին մեղրամամ, Գեհրի, խէժ, շուշմայ (սուսամ), արմաիք, օճառ, ծխախոտ, պիստակ (քարսրգ), նուշ, չամիչ, մորթ և մարոկենի (սախրիյան), մատուտակ

(միջան ֆեօֆիւ) և արջառ : Այս ապրանքներ կը զրկուին Թուրքիոյ զանազան քաղաքները, և Եգիպտոս, Ֆրանսա, Անգլիա, Իտալիա, Ամերիկա, Աւստրիա : 1894 ին Իսկէնտէրուն մտած է 2 միլիոն ոսկիի ապրանք : Ներածուած գլխաւոր վաճառքներն են բամբակեղէն ու մետաքսեղէն, շաքար ու խահուէ, բրինձ ու գինի, մորթ ու կաշի, երկաթ ու մետաղներ, լեղակ ու դեղորայք : Այս ապրանքները ծախող երկիրներուն մէջ առաջին տեղը կը բռնէ Անգլիա : Յետոյ կուգան Ֆրանսա, Թուրքիա, Աւստրիա, Եգիպտոս : — Ահա քանի մը վաճառքներու մէն մի քիւրոյի միջին գինը . — Շաքար, 90 փոյ, խահուէ 10 զրշ, մորթ 35 զրշ, բուրդ 7 1/2 զրշ, կարագ եւ ձէթ 3 1/2 զրշ. եւայլն : — 1898ին Իսկէնտէրունի նաւահանգիստն հանդիպած են 179 առագաստանաւ և 365 շոգենաւ, համագումար 544, որոց 240ը թրքական, 93 անգլ. 61 դաղ, 57 աւստրիական, 53 եգիպտական, 26 իտալական, 14 յունական : Իսկէնտէրուն շոգենաւային գծերով կապուած է Լիվրբուլի [Բարանանի, 10 օրն անգամ մը], Մարսիլիոյ (Մէսաթըռի, երկու շաբաթն անգամ մը) եւ Ամստերտամի հետ : Իսկէնտէրունի եւ Մարսիլիոյ միջեւ հեռաւորութիւնն է 3641 քիւմ. : Ճամբորդութիւնը կը տեւէ 5 օր : Եգիպտական թղթատար շոգենաւները շաբաթական երթեւեկութիւն հաստատած են Ալէքսանդրիոյ եւ Իսկէնտէրունի միջեւ, որ բաց նաւահանգիստ մ'է եւ քարափ չունի : Հետեւապէս ապրանքները մասնաւոր տուրք չեն վճարեր : Նաւահանգիստը, թէեւ հովերուն ենթարկուած, Սուրիական եզերքին վրայ նուազ վտանգաւոր դիրքն ունի : Ապրանքին նաւ դրուելու ծախքը, որ 30էն 50 փոյ. է առ մէն մի անտուկ, արտածողին վրայ է : Նաւէն հանելու ծախքն է 50 փոյ, 200 քիւրոյէ վար, եւ անկէ վեր մէն մի 100 քիւրոյին համար 50 փոյ, աւելի : Շաքարի, խահուէի, պղպեղի, դարապղպեղի (պան պիպեր), քարիւղի, մորթի, լեղակի (շիվիս) եւ արմտիքի վրայ եղած գործառնութիւնները կանխիկ են, իսկ բրինձի, հիւսուածոներու եւ խուրսալաքի վրայ՝ 3էն մինչեւ 6 ամիս պայմանաժամ կը տրուի : Իսկէնտէրուն աշխարհի միւս մասերուն հետ կապուած է հեռագրութեամբ :

Չափ. — Մէդրոն պաշտօնապէս ընդունուած է, բայց կերպասներու համար ընդհանրապէս կը գործածուի արեւն որ 68 1/2 անգմ. է : Յորենը կը ծախուի զամբիւղով, որ 72-75 օխա կը կշռէ, տեսակին համեմատ :

Կեփո. — Պաշտօնական կշիռը քիւօ և կրամ է, բայց առուտուրի մէջ սովորաբար կը գործածուին օխա և տրամ : Հին խանթարը 257 քիւօ 112 կրամ է, իսկ նորը 326 քիւօ 854 կրամ :

Իրամներ. — Օսմ. ոսկին առուտուրի մէջ կ'արժէ 126 3/4 զրշ, մէծիտիէն՝ 23 1/4 զրշ, անգլ. ոսկին՝ 138 1/2 զրշ, դաղ. ոսկին՝ 111 զրշ :

ԳՈՐԳԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԶԱՆԱԶԱՆ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՄԵՋ

ՈՒՍՈՒՄ ՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ա.

Պարսկական գորգերն եւ անոնց վրայ պատմական, արհեստական եւ սեղագրական ծանօթութիւններ.

[Շարունակութիւն]

1. Յերահանի գորգերը. — Եւրոպայի մէջ ճանչցուած և ծախուած գորգերուն գրէթէ ամենքն ալ Յէրահանի մէջ կը պատրաստուին : Ընդհանրապէս ընտիր գորգեր են, բայց թիւրքմէնի գորգերուն նրբութիւնը կամ Բիրմանի գորգերուն իսկատիպ նկարը չունին և բաղդատաբար շատ տկար դաղափար մը կուտան պարսկական գորգաշինութեան ճշմարիտ արուեստին վրայ : Վրանաբնակներու կամ գիւղացիներու

րու շինած գորգերուն արժէքը չունին: Արտադրութիւնն են ճարտարարուեստի մը, և ո՛չ թէ արգասիքն այն տեսակ մը գիտութեան գոր կարգ մը Պարսիկ գործաւորներ ժառանգ կը ձգեն սերունդէ սերունդ: Այսու հանդերձ Ֆէրահանի գորգերը մեծ կարեւորութիւն ունին արտաձուսի տեսակէտով:

Ֆէրահան քաղաքը, որ Դէհրանէ 240 քիլոմէթր հեռաւորութիւն ունի, տակաւին 30 տարի առաջ անձանօթ գիւղ մ'էր, մինչ այսօր, իր ճարտարարուեստին շնորհիւ որ շատ ծաղկեալ վիճակի մէջ է, 18-20 հազար բնակիչ ունի: Իր պարունակած 8000 տուներէն 800ին մէջ կը բնակին գորգագործներ 1200 գործասեղաններով, մինչ 1872 ին 40 գործասեղան միայն կար: 1874ին Մանչէսթըրի վաճառականրէն Ձիկէր և Ընկ. այստեղ գորգաշինութեան գործ բացին և այսօր այնքան առաջ գացած են որ իրենց սեփական շէնքերն աւելի քան 3000 քառակուսի մէդր տեղ բռնած են: 1884ին ուրիշ անգլիական ընկերութիւն մը, Տիի Բրքըն Բարքի մանիֆէկչըրի, հաստատուեցաւ. Հօց և Որդիք ընկերաւորն անունով: Այս ընկերութիւններու պատրաստած գորգերուն աղէկ տեսակին մէկ քառակուսի մէդրը կը կշռէ 3 քիլոկրամ, իսկ սովորական տեսակինը՝ 2 քիլոկրամ: Քառակուսի մէդրին գինն է 15էն 200 դրան կամ 35էն 475 դր., ըստ տեսակին: Գործաւորներու օրականն է 8 շահիէն մինչև 2 դրան կամ 2 դր. էն 5 դր.: Այս երկու անգլիական ընկերութիւններէն զատ կան տեղացի գորգագործներ ալ: Համադումար 15-20 միլիոն դրանի գորգ կը պատրաստուի ի Ֆէրահան: Այս գումարին $\frac{3}{10}$ ը Ձիկէրի, $\frac{5}{10}$ ը Հօցի և $\frac{2}{10}$ ը Պարսիկ, Թուրք և Հայ վաճառականներու կը պատկանի: Գորգերն Սպահանի կամ Դարբէժի ճամբով Եւրոպա կը հասնին 50 օրէն: Կառավարութիւնը $\frac{50}{100}$ մաքսատուրք կ'առնէ:

2. Քիրմանի գորգերուն նկարները, որք ընդհանրապէս պարսկական գարգերէ կը կազմուին, աւելի խառնակ բայց աւելի ինքնատիպ են քան Ֆէրահանի գորգերուն նրկարները: Այս գորգերուն բուրդը բնտիր է և հիւսուածքը՝ սեղմ: Քիրմանի մէջ ալ սեպեկներ կը շինեն, ինչպէս ի

Ֆէրահան, բայց ընթացիկ տեսակներն են Պալիչէ և Ճաննամաղ, Ասոնց քառակուսի մէդրը գրէթէ մէկ քիլօ կը կշռէ: Այժմ, դժբախտապէս, հանքային գոյներ գործածուելուն համար, քառակուսի մէդրը, որ առաջ 900-950 դր. կ'արժէր, հիմակ 100-150 դր. միայն կ'արժէ:

3. Քիրմանի գորգերը միւս բոլոր գորգերէն աւելի յարգի ու համբաւաւոր են իրենց սեղմ հիւսուածքով, ընտիր բուրդով, գեղեցիկ նկարներով և մաքուր ու փայլուն գոյներով. ցաւալի է որ հին նկարները տակաւ կ'անհետին և անոնց կը յաջորդեն Եւրոպական գարգանկարներ: Ասոնք երբեմն կը յաջողին, բայց յաճախ ո՛չ մանաւանդ երբ կենդանի կամ գիւղական տեսարան մը նկարել ուզուի: Սովորական նկարներն են արարական գարգեր, արմաւենիի ու տեր, եւլն. որք արուեստով ու ճարտարութեամբ զիրար կը խաչաձեւեն, իրարու կը խառնուին և իրենց գոյներու այլադանութեամբ սիրուն երեւոյթ մը կուտան գորգին: Մինչև 25-28 տարբեր գոյն ունեցող գորգեր կան Քիրմանի մէջ որու արտադրութիւնք իրաւօր արժանի են իրենց վաստըկած համբաւին և առաջին տեսութեամբ կը զանազանուին միւս պարսկական գորգերէն: Մաւաշին ընդհանրապէս պղգատի է, այսինքն 3 մէդր երկայնութիւն և $1\frac{1}{2}$ - 2 մէդր լայնութիւն ունին: Աւելի լայն գորգեր կրնան շինուիլ, բայց շատ սուղ կ'ելլեն: Քիրմանի սովորական գորգ մը մինչև 5 ոսկիի կը ծախուի, իսկ լաւ տեսակին քառակուսի մէդրը մինչև 8-10 ոսկիի: Այս գորգեր ընդհանրապէս գոյգ կը ծախուին: Քիրմանի մէջ վեց հատ հոշակաւոր հիւսող վարպետներ կան որք 50 գործասեղան կը բանեցնեն: Գորգին երկայնութենէն կախեալ է աշխատող գործաւորներուն թիւը: Մէն մի պարսկական կէս կարտայի (60 սնգ.) վրայ մէկ գործաւոր կ'աշխատի: Մինակ Քիրմանի մէջ է որ այբերը գորգ կը հիւսեն՝ հակառակ պարսկական սովորութեան: Գործաւորներուն մէջտեղ կը նստի վարպետը, որ ընդհանրապէս 16-18 տարեկան պատանի մ'է. իր հրամանին տակ աշխատողներն 5-14 տարեկան տղաքներ են. վարպետը օրական 10 ռանի կամ 100 փրլ. կ'առնէ, իսկ տղաքը՝ սուաջին

տարին 20 դրան կամ 50 դր. Բ. տարին 40 դրան, Գ. տարին 60 դրան և այսպէս շարունակաբար մինչև որ իրենք ալ վարպետ ըլլան: Ամէն տեղէ աւելի հոս շատ խնամք կը տարուի հիւսելու գործողութեան: Գորգն երբեք չի ներկայացնէր այն անկանոնութիւնները որոս ունին միւս պարսկական գորգերը, որովհետեւ թեզանի թելերը պէտք եղածին պէս չեն ձգտուիր: Թեզանը Անգլիայէն կամ Պոմպայէն ներածուած բամբակով կը պատրաստուի, իսկ գորգին համար կը գործածուի ընտիր բուրդ, խնամքով ըստկուած, կամ այժի մազ, զոր հիւսողներն իրենք կը սանտրեն: Այս կերպով պատրաստուած գորգերը շատ սուղ կ'արժեն: Միայն սպարանքի համար մետաքսեայ ծանրագին գորգեր կը հիւսեն ի Քիրման: Քիրմանի գորգերուն վրայ մեծ գործ չըլլար: Արտածումը սահմանափակ է: Քիչ մը բան Հնդկաստան կը ներածուի և մաս մ'ալ Պոմպայի կամ Բէնճապի հարուստներուն կը ծախուի: Այս գորգերը ընդհանրապէս իբր նուէր կը զրկուին բարձրաստիճան անձերու:

4. Շիրազի գորգերը միջակ ծաւալ ունին: Թեզանը բուրդ և նկարները կանոնաւոր են: Հոս ալ բնանեղիճի գոյնը տակաւ կը յաջորդէ բուսական գոյներուն: Փարզա նահանգը, ուր կը գտնուի Շիրազ, գորգաշինութեան ուրիշ կեդրոններ ալ ունի, ինչպէս Մէշէտ, ուր լոկ բուսական ներկեր կը գործածուին և Հերիս, ուր բնանեղիճը մուտ գտած է: Շիրազի գորգերուն ընտիր տեսակին քառակուսի մէզը մինչև քսան ոսկի կ'արժէ:

5. Հերազի գորգերը հրապարակին վրայ քիչ կը գտնուին: Հիւսուածքի կողմէ կը նմանին Պորասանի գորգերուն: Նկարներն ընդհանրապէս տեսակ տեսակ զարդեր են ճերմակ, կոկոս, կապոյտ, դեղին կամ նարնջի գոյն յատակի վրայ:

6. Թիւրքմէնի գորգերը միւս գորգերէն դիւրաւ կը գանազանուին իրենց գոյներով և իրենց առանձնայատուկ նրկարներով: Յատակը միշտ նոնադոյն է և վեցանիւն զարդանկարներ ունի: Եզերքներուն վրայ նեղ շրջանակ մը կայ: Բուրդն ընտիր է և հիւսքը՝ սեղմ: Չ ու կէս մէզը երկայն եւ 1 ու կէս մէզը լայն գորգ մը շատ դիւրաւ 30 թումանի կը

ծախուի: Այս գորգերը քանի հիննան գոյներն այնքան կը գեղեցկանան:

7. Պորասանի գորգերուն նկարներն ընդհանրապէս կոշտ, անարուեստ են: Գոյներուն մէջ բնաւ ներդաշնակութիւն չկայ: Սակայն հիւսուածքը շատ սեղմ է: 50 տարի է որ գորգաշինութիւնը մեծ զարգացում ստացած է ի Պորասան: շատ գործարաններ բացուած են իրարու ետեւէ: և որովհետեւ այս նահանգը Ռուսական սահմանադիւին մաս է, հիւսուած գորգերը շուտով Եւրոպա կ'արտածուին:

Գ. Պարսիկը փոքրածաւալ գորգ մ'է որ ընդհանրապէս գոյգ կը ծախուի: Արդէն խուրճիկ երկու պարկ ըսել է: Մէն մի խուրճիկի վրայ հաստ կտաւ մը կայ որ միայն երեք կողմէ կարուած ըլլալով գրպան մը կը կազմէ: Երկու խուրճիկներու եզերքները խծիպով մը իրարու կը միացնեն, որով ճշմարիտ մախաղ մը [հէյպէ] կ'ըլլայ և ճամբորդութեան ատեն կը գործածուի ձիուն կամ ջորիին թամբին վրայ դնելով և երկու կողմէ վար կախելով: Այս խուրճիկներուն նկարները, ինչպէս նաեւ հիւսուածքն ու գոյները շատ այլազան կ'ըլլան: Կրնանք ըսել թէ գորգ արտադրող ամէն կեդրոնի մէջ անպատճառ խուրճիկ ալ կը շինուի: Ժամանակաւ մեծ քանակութեամբ խուրճիկ կը շինուէր, բայց քանի մը տարի կայ որ անոնց շինութիւնը դադարածի պէս է:

Դ. Քիլիմները տեսակ մը գորգեր են, որք կը գործածուին իբր դրան վարագոյր, սրահակ, սեղանի ծածկոց եւ այլն: Պարսկական շատ տուներու մէջ քիլիմը նկատուած է իբր ճշմարիտ գորգ որ շուտով չի մաշիր: Արտադրութիւնը տահմանափակ է: Հազիւ 4—5 գիւղեր այս գործով կ'ըբաղին: Բամբակէ քիլիմները Քէշանի մէջ կը շինուին: Ատոնց նկարները գրեթէ միշտ երիզներ են լոկ, կարմիր, կապոյտ ճերմակ ու դեղին գոյներով. երբեմն ալ շրջանակներ եւ վեցանկիւններ:

* * Ահա ասոնք են Պարսկաստանի գորգերուն զլխաւոր տեսակները: Երեւուն տարի ասաջ անոնք շատ տարածուած չէին: Սպառումը տեղական էր եւ արտադրութիւնը սահմանափակ: Հագուագիւտ նմոյշներ միայն Եւրո-

պա կ'արտածուէին: Այսօր բոլորովին փոխուած են գործերը: Ձիկէր եւ Հօց ընկերութիւնք մասնաճիւղեր բացած են Պարսկաստանի բոլոր մեծ քաղաքներուն մէջ, ի Թէհրան, Դաւրէժ, Սպահան, Շիրազ, եւ ո'չ միայն Արեւմտեան երկիրներ կը զրկեն իրենց գործարաններուն մէջ պատրաստուած գորգերը, այլ նաև՝ շնորհիւ գործակալներու՝ զոր ունին գորգ արտադրող գլխաւոր կեդրոններու մէջ, եւրոպա կը զրկեն Պարսկաստանի բոլոր նահանգներուն մէջ պատրաստուած այլատեսակ գորգերը: (Շարունակելի)

Հ Ի Ի Ս Ե Լ Ա Ն Ի Ի Թ Ք

Ա.

Բ Ո Ւ Ր Դ

Բուրդը՝ ամենահին ժամանակներէ ի վեր հագուստի եւ կարասիներու գլխաւոր նախանիւթն [matière première] ըլլալով՝ երկրագործութեան, ճարտարարուեստի եւ վաճառականութեան մէջ մեծ կարեւորութիւն ունեցած է միշտ:

Շատ տեսակ բուրդեր կան: Քանի որ երկրի մը հողին, կլիմային եւ սննդեան համեմատ ոչխարներու տեսակներն իրարմէ կը տարբերին, բնական է որ անոնց բուրդին տեսակներն ալ տարբեր ըլլան, թելերուն երկայնութեան, նրբութեան, ամրութեան, գոյնին եւ շիտակ կամ գանգուր ըլլալուն համեմատ: Բուրդը՝ առեւտրական հրապարակին վրայ՝ գլխաւորապէս չորս տեսակի բաժնուած է.—

Ա. — Մերինոս — Սպանիոյ մէրինոս կոչուած ամենաբնորոշ ոչխարներու բուրդը, նուրբ, կակուղ, գանգուր եւ կարճ թելերով:

Բ. — Անգլիական — Շրվեթի, Տիշլէյի, Սաութտարնի բուրդեր, ողորկ, փայլուն եւ երկար թելերով:

Գ. — Հասարակ — Ափրիկէի, Ասիոյ եւ Մայրագոյն Արեւելքի բուրդեր, հաստ, շիտակ, ամուր եւ մինչև 20—30 սնդ. երկայն թելերով:

Դ. — Խառնածին — Մէրինոսի եւ ուրիշ ոչխարներու միացումէն սերածներուն բուրդը, որ աւելի կամ նուազ կ'ունենայ մէրինոս բուրդին յատկութիւնները:

Ճարտարարուեստի մէջ, բուրդերն երկու դասի կը բաժնուին: 1. — կարճ կամ գլուելու բուրդեր, որք մինչև 10 սնդ. երկայն կ'ըլլան եւ 2. — երկայն կամ սանտրուելու բուրդեր, որք 10էն մինչև 30 սնդ. երկայն կ'ըլլան: — կարճ բուրդերն հաստ կերպաններու, ինչպէս չուխայ, ֆըլանէլ, կը գործածուին, իսկ երկայնները՝ նուրբ եւ ամուր կերպաններու, ինչպէս սաթէն, քաղմիր եւ այլն: — Մինչև 18րդ դար Սպանիոյ մէրինոսները խիստ յարգի եւ նշանաւոր էին: Եւրոպական գործարաններու պէտք եղած բուրդը մինակ Սպանիա կը մատակարարէր, շնորհիւ իր ոչխարներուն առատութեան եւ բուրդին ազնուութեան: Տարազագործ երկիրներն ամէն ջանք ի գործ կը դնէին սպանիական մէրինոսներու այս ազնիւ տեսակն իրենք ալ ունենալու համար: 1723ին Շուէտ, 1765ին Սաքսոնիա եւ 1775ին Գաղղիա զանազան միջոցներով եւ մեծամեծ զոհողութիւններով յաջողեցան այս բնորոշ տեսակը ներմուծել իրենց երկիրներուն մէջ: Գաղղիոյ Լուի Ժ.Գ. թագաւորը սպանիական կառավարութեանէն ուզեց եւ ստացաւ 350 ոչխար: Բայց այս թիւն անբաւական եղաւ: 1799ին Գաղղիա՝ Պալի դաշնադրութեամբ՝ Սպանիայէ սուաւ 5500 հատ բնորոշ ոչխար տեսակ մէրինոս, որք տեղական ոչխարներու հետ խառնուելով Ռամպուլլէի ոչխարներու նշանաւոր հօտերը կազմեցին: — 19րդ դարու սկիզբը, ամբողջ եւրոպա այնքան եռանդով աշխատեցաւ իր ոչխարները շատցնելու եւ անոնց տեսակն ազնուացնելու որ քիչ տարուան մէջ յաջողեցաւ ունենալ մինչև 172 միլիոն ոչխար, մեծ մասը խառնածին, մէրինոսէ ո'չ նուազ յարգի: Մասնաւորապէս Գերմանիա այնչափ խնամքով հետեւեցաւ

տեսակի անհուացման գործին, որ բուն սպանիական մէրի-
նոսը գերազանցեց: Անգլիական գործարանք մինչեւ այսօր
Գերմանիայէ կը հայթայթեն իրենց պէտք եղած ընտրելա-
գոյն տեսակ բուրդը: — Եւրոպայի այս եռանդ հետզհետէ
թուլցաւ 19րդ դարուն մէջ: Ոչխարներուն հօտը թէ՛
թուով եւ թէ՛ տեսակով անկում կրեց: Անոնց թիւն այ-
սօր 140 միլիոն է, եւ տեսակն ալ միջակցած: Ասոր պատ-
ճառն ա՛յն է որ երբ երկրագործք սովրեցան սառոյցով կամ
ուրիշ միջոցներով միսը պահել կամ մսեղէն չիներ ու ծա-
խել, տեսան որ ոչխարին միսն ալ բուրդէն ո՛չ նուազ շա-
հաբեր է, մանաւանդ որ նախ՝ բուրդին գինն հետզհետէ իյ-
նալու եւ միսին գինը բարձրանալու հակամէտ է եւ երկ-
րորդ՝ լաւ տեսակ բուրդ տուող ոչխար մը հասցնելու հա-
մար է տարի, իսկ մսեղ ոչխար մը ունենալու համար առ ա-
ռաւելն Ձ տարի սնունդ տալ պէտք է: Այս նկատումներով
սկսան ոչխարին բուրդէն աւելի անոր մսեղութեան հոգ տա-
նիլ, որով բուրդի տեսակն ալ հետզհետէ միջակցաւ: Եւրո-
պացի երկրագործ դասին՝ ոչխարաբուծութեան այնքան ե-
ռանդով չհետեւելուն մէկ ուրիշ պատճառն ալ ա՛յս է որ անգ-
լիական դաղթավայրերու մէջ ոչխարներուն թիւն անհաւա-
տալի կերպով աճեցաւ եւ ասոր հետեւանքով գիները կէս
առ կէս ինկան Եւրոպայի հրապարակին վրայ: — Անգլիա-
կան դաղթավայրերու [Աւստրալիա եւ Բարեյոյս] ոչխարաց
թուոյն աճումն արդարեւ անհաւատալի է: 1824ին Լոնտոնի
հրապարակին վրայ 400 հակ Աւստրալիոյ եւ Բարեյոյսի բուրդ
երեւցաւ: 75 տարուան մէջ այս թիւ 4000 ապատկուեցաւ,
գի 1898ին 1,556,388 հակ Աւստրալիոյ եւ Բարեյոյսի բուրդ
կար Լոնտոնի հրապարակին վրայ: Թէեւ առաջին անգամ
անոնց տեսակին վրայ առարկութիւններ եղան, բայց այսօր
ամէն մասամբ գոհացուցած են սպառողները: — Բոլոր ոչ-
խարաբոյժ երկիրներու ոչխարաց թուոյն եւ բուրդին քա-
նակութեան վրայ գաղափար մը առնելու համար կը բաւէ
աչքէ անցընել հետեւեալ վիճակագրութիւնը . —

		Հաս ոչխար
Եւրոպա	Եւրոպ. Ռուսիա եւ Լեհաստան	42,220,100
	Անգլիա	30,567,000
	Գաղղիա	21,445,100
	Աւստրիա—Հունգարիա	11,303,500
	Գերմանիա	10,866,800
	Իտալիա	6,900,100
	Ռումանիա	5,002,400
	Դանիա	1,246,600
	Նորվեկիա	1,417,500
	Շուէտ	1,298,750
	Հոլանտա	700,000
Պելժիա	285,750	
Ասիա. — Անկարելի եղած է ոչխարնե- րուն ամբողջ թիւը վիճակագրել .	35,000,000	
Ամերիկա . — Միացեալ Նահանգք	37,657,000	
» Արժանթին, Ռուրուկուէյ եւլն.	80,000,000	
Ա.վրիկէ. — Անգլ. դաղթավայրք	126,695,000	
Գումար [մօտաւոր հաշուով]	420 միլիոն	

Այս ոչխարներէն արտադրելի անլուայ բուրդին քանա-
կութիւնն է 1,050,000,000 քիլոկրամ, որ բոլորովին մաք-
րուելէն ետքը կը մնայ 568,000,000 քիլոկրամ: — Բուրդը՝
տարազագործութեան յատուկ նախանիւթ մ'ըլլալով՝ անոր
սպառումն ալ աւելի տարազագործ երկիրներու մէջ շատ
կ'ըլլայ: Մօտաւոր հաշուով բուրդի տարեկան սպառման 22
9/10ը կը պատկանի Մ. Նահանգներու, 23ը՝ Անգլիոյ եւ մը-
նացեալը՝ Գաղղիոյ, Գերմանիոյ եւ միւս եւրոպական տա-
րագործ երկիրներուն: — Բուրդի առաջին հրապարակն է
Լոնտոն, յետոյ Լիվրբուլ եւ Մարսիլիա: Միւս հրապարակ-
ները կարեւորութենէ զուրկ են: Բոլոր մեծ գործառնու-
թիւնք եւ գնահատութիւնք յիշեալ երեք քաղաքներուն
մէջ տեղի կ'ունենան: Լոնտոն մասնաւորապէս անգլ. դաղ-
թավայրերու բուրդին հրապարակն է, Լիվրբուլ՝ հասարակ
տեսակներուն, իսկ Մարսիլիա՝ խառնածին տեսակներուն:
— Բուրդն հրապարակի վրայ կը ծախուի անլուայ եւ լուա-
ցուած վիճակներու մէջ: Անլուայ բուրդը ճարպոտ է ոչխա-

րին քրտինքէն եւ կեղտոտ՝ փոշիներէն: Բուրդն երկու կերպ կը լուան. 1. Ամբողջ հօար գետի մը մէջէն կ'անցընեն, հոն կը լուան եւ յետոյ կը խուզեն: 2. Ոչխարին բուրդը կը խուզեն եւ յետոյ տաշտերու մէջ տաք ջրով կը լուան: Այս ջուրը բօքաս կը պարունակէ, զոր մասնաւոր միջոցներով կը հաւաքեն: — Աղտոտ բուրդն եւ լուացուածը կէս առ կէս տարբերութիւն կ'ընեն: — Ոչխարի բուրդը մասնաւոր գործիքներով կը խուզեն տարին մէկ անգամ եթէ բուրդը կարճ է եւ երկու անգամ՝ եթէ երկայն է: Մարտին խուզուածը ձմեռուան բուրդ կ'ըսուի, իսկ Սեպտեմբերին խուզուածն՝ ամառուան բուրդ: — 1880ին՝ լուացուած և բոլորովին մաքրուած բուրդին գինն էր քիլոն 7¹/₂ Ֆր., 1885ին՝ 4,80 Ֆր., 1890ին՝ 6 Ֆր., 1895ին՝ 3.80 Ֆր., 1898ին՝ 4¹/₂ Ֆր: Թէև բուրդ ըսելով ո՛չ միայն ոչխարին, այլ այծին, ուղտին բուրդերն ալ կը հասկցուին, նրայց այս վերջինները՝ վաճառականական տեսակէտով՝ ոչխարին բուրդէն կը տարբերին:

Ն Ա Մ Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Ե Ա Ն Ո Ճ Ը

Սիրելի բարեկամս

Ստացայ նամակնիդ: Առևտրական կանոնաւոր նամակներ կարենալ խմբագրելու համար ինձմէ խորհուրդ կ'ուզէք, ինչ որ ամենայն սիրով պիտի տամ, յուսալով թէ փոքր ինչ օգտակար պիտի կրնայ ըլլալ ձեզ: Առևտրական կանոնաւոր նամակ մը գրելու համար նախ պէտք է առևտրական նամակներու յատուկ ոճերը գիտնալ, քիչ խօսքով շատ բան հասկցնել եւ բնաւ անքաղաքավար լեզու չգործածել: Առևտրական ոճին եւ բաղմատեսակ ձևերուն բնութեանաւոր համար պէտք է շարունակ ի ձեռին ունենալ ընդարձակ եւ ընտրելագոյն նամականի մը: Թէև նամակագիրն հոն ամէն ուղած ձևը

պիտի չգտնէ, բառարանի պէս, բայց միշտ վայն թղթատելով եւ ուսումնասիրելով պիտի կրնայ քիչ կամ շատ ժամանակի մէջ անոր ոճերն ու ձևերը իւրացնել: Եթէ անգլիական Time is money [Ժամանակը դրամ է] խօսքն արժէք մ'ունի, բնական է որ ամէնէն աւելի գործի մէջ պէտք է ըլլայ, եւ հետեւապէս առևտրական նամակագրութեան մէջ բոլորովին անակզի եւն աւելորդաբանութիւն, զբարանութիւն: Միշտ ջանալու է քիչ խօսքով շատ հասկցնել, մթին և թիւրիմաց չըլլալու պայմանաւ:

Հարցուի թերեւս թէ նամակներու մէջ անքաղաքավար լեզու գործածել կարելի՞ է երբեք: Անշուշտ կարելի չէ երկու բարեկամ թղթակիցներու կամ շահակիցներու միջեւ: Բայց ես պիտի պնդեմ թէ նոյն իսկ երկու հակաակորդ թղթակիցներ ջանալու են միշտ քաղաքավար ըլլալ և թընամական ո՛ր եւ է բառ չգրել իրենց նամակներուն մէջ:

Նամակագիր մը՝ եթէ ուշ դնէ այս պարզ կանոններուն՝ կրնայ վատահ բլլալ թէ լաւ թղթակից մը բլլալու սահմանուած է:

[Գերմաներէնէ] Չերդ
M. Becker

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

8. — Եթէ ցորենին բուտը Յտեսայի մէջ 93 կոպէկ արժէ, Մարտիլից մէջ 100 քիլօն քանի՞ Փրանք կ'արժէ (100 կոպէկ=1 բուսլ=2,70 Փր. 1 բուտ 16,38 քիլօ):

9. — Ապրանքի մը մէթրօն 30 ղշ. արժած է մեզի՞ վաճառման ատեն 16 եւ 20% զեղշ եւ 5% յանձնարարողչէք պիտի տանք: Քանի՞ ծախելու է որ 100% շահած ըլլանք:

10. — Առևտրական պաշտօնեայ մը ի՞նչ յատկութիւններ ունենալու է:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ

Թէ ի՞նչ պէտք է ընել

Աճվեալ մուշակներու ցկասմամբ

(Շար. եւ վերջ)

3. — Փոխանակագրին տէրը՝ բրոքտայօն ընելով պէտք եղած անձերուն հաղորդելէն ետք՝ պարտաւոր է դատ բանալ : Օրէնքն այս դատին համար ալ ժամանակամիջոց մը որոշած է, որ բրոքտայօնին հաղորդուած թուականէն սկսեալ 15 օր է(*) : Եւ ինչպէս որ 24 ժամն անցնելէ ետք եղած բրոքտայօն չեղեալ կը նկատուի, այնպէս ալ եթէ այս ժամանակամիջոցին մէջ դատ չբացուի, փոխանակագրին տէրը միւս ստորագրողներուն դիմելու իրաւունքէն կը զրկուի : Դատը՝ ստորագրողներէն ո՛րեւէ մէկուն բնակավայրը գտնուած դատարանին առջեւ կարելի է հանել եւ միւսներն ալ հոն կանչել : Այս 15 օրեայ ժամանակամիջոցն ամէնուն համար ալ է, այսինքն բոլոր ստորագրողներուն դէմ այս 15 օրուան մէջ դատ բանալու է, եւ ո՛չ թէ առաջին 15 օրուան մէջ մէկուն եւ երկրորդ 15 օրուան մէջ միւսին դէմ. հոս ուրիշ խնդիր մ'ալ կը ծագի. — Փոխանակագրին տէրը՝ տեսնելով որ փոխանակագրին անվճար մնաց՝ ուղղակի իրեն փոխանցողին դէմ դատ բանալով ստակը կրնայ առնել : Հիմակ այս վերջինն ո՛ւրիշ եւ ի՞նչպէս պիտի պահանջէ, վերն ըսինք թէ փոխանակագրին մէջ ստորագրութիւն ունեցող-

[*] Եթէ դատ բանալիք անձը մէկէ աւելի Բօնաֆնէր հետու ըլլայ [6 ժամի հեռաւորութիւնը Բօնաֆ մը կը համարուի] ամէն մէկ Բօնաֆի համար երեքական օր պէտք է աւելցնել այս ժամանակամիջոցին վըրայ : Օտար երկիրներու համար ալ օրէնքը ժամանակամիջոցներ որոշած է :

ներուն ամէն մէկն իրմէ վերջ ստորագրութիւն դնողին երաշխաւոր կը նկատուի : Ուրեմն ստակը վճարողը կըրնայ իրմէ առաջ ստորագրութիւն դնողներէն ամէն մէկուն դատ դատ կամ ամէնուն մէկէն դիմել, որովհետեւ ստակը վճարելով փոխանակագրին տիրոջ բոլոր իրաւունքն իրեն անցած է : Այս շղթայուած երաշխաւորութիւն մինչեւ քաշողին կերթայ կը յանգի, որ այլ եւ չի կրնար ուրիշին դիմել, քանի որ իրմէ առաջ ստորագրութիւն դնող չկայ : Փոխանակագրը քաշած ժամանակ արդէն փոխարէնն առած ըլլալով, հիմակ ալ կը վճարէ : Այս կերպ վճարողներն ալ՝ իրենցմէ առջիններուն կարենալ դիմելու համար՝ պարտաւոր են դարձեալ 15 օրուան մէջ դատ բանալ : Այս 15 օրուան ժամանակամիջոցն իրենց դէմ դատ բացուած օրէն կը հաշուուի, այսինքն՝ երբ փոխանակագրին տէրը փոխանցողին դէմ դատ բանայ, սա ալ՝ առանց դատին վերջաւորութեան սպասելու՝ կոչնագրին [ճեղպ փոսուլասի] իրեն հարազային այս իրաւունքէն կը զրկուի : Հիմա տուած բացատրութիւնն իս ամփոփելով՝ կ'ունենանք հետեւեալ չորս կանոնները, որք պէտք է միշտ մտքերնուս մէջ քանդակուած ըլլան. —

Ա. — Եթէ փոխանակագրին ընդունուած է, ընդունողն այդ մուրհակին բուն պարտականն ըլլալով, առանց բրոքտայօն ընելու եւ առանց որոշեալ պայմանաժամուն մէջ դատ բանալու, կարելի է՝ փոխանակագրին փոխարէնը պահանջել իրմէ, մինչեւ որ ժամանցում [5 տարի] տեղի ունենայ : Ի հըրամանի մուրհակ մը ստորագրողէն ալ՝ առանց բրոքտայօն ընելու եւ առանց դատ բանալու՝ կարելի է փոխարէնը պահանջել :

Բ. — Եթէ փոխանակագրին ընդունուած չէ, այն ատեն բուն պարտականը քաշողն ըլլալով, անկէ ալ՝ առանց վերոյիշեալ օրինական ձեւակերպութիւնները կատարելու՝ կարելի է ստակը պահանջել, մինչեւ որ ժամանցում տեղի ունենայ :

Գ. — Եթէ ընդունուած փոխանակագիր մը կարելի չըլլայ ընդունողէն գանձել եւ քաշողին դիմել ուղուի, պէտք է 24 ժամուան մէջ քողեւոր ընել անոր դէմ եւ 15 օրուան մէջ դատ բանալ որպէս զի՝ իբրև երաշխաւոր՝ կարելի ըլլայ այդ դրամն անկէ առնել, եթէ այս ձեւակերպութիւնք կատարուած չըլլան, քաշողը՝ փոխանակագրին փոխարէնը [խարքը] ընդունողին զրկած ըլլալն հաստատելով՝ կրնայ ինքզինքն ազատել: Սակայն այս պարագային մէջ ալ՝ եթէ երբեք կարելի ըլլայ ստուգել թէ փոխարէնը վերստին իր ձեռքն անցած է՝ դարձեալ կրնայ իրմէ պահանջուիլ:

Գ. — Եթէ փոխանակագիրը — ընդունուած կամ ոչ — կարելի չըլլայ ընդունողէն կամ քաշողէն գանձել և փոխանակագրին մէջ ստորագրութիւն ունեցողներուն դիմել ուղուի, դարձեալ պէտք է որ այդ ձեւակերպութիւնք կատարուած ըլլան, հակառակ պարագային՝ փոխանցողը կրնան ինքզինքնին ազատել առարկելով թէ իրենց դէմ քողեւոր եղած կամ որոշեալ ժամանակամիջոցին մէջ դատ բացուած չէ: Այս վերջինները քաշողին վրայ սա՛ առաւելութիւնն ալ ունին որ քաշողը ինքզինք պատասխանատուութենէ ազատելու համար փոխարէնը ժամանակին զրկած ըլլալն ապացուցանելու պարտաւոր է, մինչդեռ իրենք այս տեսակ պարտականութիւն մը չունին: Բայց այս պարագային ալ՝ եթէ կարելի ըլլայ ստուգել թէ փոխարէնն ուէ կերպով իրենցմէ մէկուն ձեռքն անցած է, անկէ կրնայ պահանջուիլ: Հոս դարձեալ պիտի կրկնեմ թէ որո՛ւ դէմ որ քողեւոր եղած է, միայն անիկայ պատասխանատու է: Այսպէս, եթէ քաշողին դէմ բողոքուած է, միւսներուն եւ եթէ Բ. փոխանցողին դէմ բողոքուած է Ա. և Գ. փոխանցողներուն չի կրնար դիմուիլ: Եթէ մէկն այս ձեւակերպութիւններէն զերծ մնալ ուզէ, կրնայ փոխանակագիրն առած ժամանակ մէջը պայման դնել որ, եթէ ստակը չվճարուելու պարագային ո եւ է դիմում կատարել հարկ ըլլայ, առանց ծախքի եւ առանց ո եւ է ձեւակերպութեան պիտի կատարէ: Այն ատեն քողեւորոյի եւայլն հարկ չի մնար: Օրինական այս սկզբունքներ, ինչպէս տեսանք, ի հրամանի մուրհակներուն [հմեհ մուհարեհ] նկատմամբ ալ մի եւ նոյն են, այսինքն եթէ միայն ստորագրողին դէմ քողեւոր ըլլայ, միւսները կ'ազատին:

ՏԻՐԱՆ ԵՐԿԱՆՅԱՆ



Տէ՛ր

Իմացայ որ կը փափաքիք քովերնիդ առնել պաշտօնեայ մը, որ ձեր գործերուն տեղեակ և Ֆրանսերէն ու Գերմաներէն լեզուներով նամակներ գրելու կարող ըլլայ: Այս պայմանները գոհացնելու վիճակի մէջ կարծելով զիս, կը համարձակիմ իմ ծառայութիւններս մատուցանել ձեզ, եթէ պաշտօնը բաց է տակաւին: Բաղաքիս մէջ գտնուող Մ. Մ. Ռուսիէի և Լնկ, որոց քով պաշտօնավարած եմ քանի մը տարիներ, պէտք եղած տեղեկութիւնները կրնան տալ ձեզ իմ մասին: Կը համարձակիմ ապահովել ձեզ, Տէ՛ր, որ եթէ ձեր վստահութեամբ պատուէք զիս, պիտի ջանամ արդարացնել զայն ճշտապահութեամբս և եռանդովս:

Նպաստաւոր պատասխանի մը սպասելով,

Եմ յարգանք

Ձեր ամենահնազանդ և ամենախոնարհ

Ծառայն

Պարո՛ն

Կը ցաւինք որ չենք կրնար օգտուիլ ձեր ծառայութենէն, ակնարկած պաշտօննիդ քանի մը օրէ ի վեր ուրիշ յանձնուած ըլլալով:

Ընդունեցէ՛ք, Պարո՛ն, մեր յարգանաց հաւաստիքը

...

افندی

امور تجاریه کوزه واقف، فرانسزجه و آلمانجه ایله مکاتبهده مقتدر برآموره احتیاجکیز اولدیغی مسموع عاجزانه اولدی . شرائط مزبوریه ای کاله کندیغی مقتدر ظن ایتمکده اولدیغیدن شاید مأموریت مذکورده هنوز منحل ایسه خدمات بندکاندهمی تقدیمه متجاسر اولورم . حق عاجزانهده معلومات استحصال ایتمک آرزو بیوریلورسه برقاچ سنه نزدلرنده استخدام اولدیغیم شهریمزده مقیم م . م روئچار و قومپانیه سنه مراجعت اولنه بیلیر . موجب شرف بیلدیگیم امنیت والاری حق عاجزانهده شایان بیوریله حق اولورسه شوق و اهتمام تام ایله بروقق دخلواه عالی حرکت ایله جکمی تأمینه جرأت ایلر وجواب موافقتکزه منتظر اولدیغیمک بیانیه تعظیبات فائقه بندکاندهمک قبولی نیاز ایدرم

افندی فی سنه

بنده

...

افندی

ذکر اولنان مأموریتیه برقاچ کوندن برو دیگر برافندی تعیین اولدیغندن مع التأسف خدمتمکزدن استفاده ایدهمیه جکمی بیان واحتراماً عمزی قبول ایتمکیزی رجا ایدرز فی سنه

ԳՈՐԾ Ն Ա Կ Ա Ն Մ Է Թ Ո Տ

ԱՆԳՂԻՒԱԿԱՆ ԴՐԱՄՆԵՐՈՒ 5 ԵՒ 2½ 0/0Ը ԳՏՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. — Սղերլիցի վրայ . — Գումարի մը 5 0/0ը գտնելն անոր քսաներորդ մասը գտնել է : Սղերլիցին քսաներորդ մասը գտնելով, շիլինին հաւասար թիւ մը գտած կ'ըլլանք, քանի որ շիլինն սղերլիցին քսաներորդն է . —

Օրինակ . — 50/0 £. 18ի վրայ = շիլին 18
 » » 72 » = » 72 = £. 3. 12
 » » 156 » = » 156 = » 7. 16

2. — Շիլիցի վրայ . — Շիլինը 20ով բաժնել, կամ 10ով բաժնելէ ետքը ½ շիլինով, այսինքն 6 բէնայով բազմապատկել, Այսպէս, շիլինին տասներորդը 6ով բազմապատկելնուս պէս, 50/0ի համապատասխանող բէնաներու թիւը կը գտնենք . —

Օրինակ . — 50/0 18 շիլինի վրայ = 1,8 × 6 = 10,8 բէնա
 » 15 » » = 1,50 × 6 = 9 »
 » 8 » » = 0,8 × 6 = 4,8 »

3. — Բեկայի վրայ . — Սղերլին, շիլին եւ բէնա գըտնըւած գումարի մը մէջ անշուշտ 11էն աւելի բէնա չի գտնըւիր : 11 բէնային 50/0ը կ'ընէ ½ կամ մօտ ½ բէնա : Մինչեւ 8 բէնա չարժեք 50/0ն առնել, իսկ 9, 10, 11 բէնայի համար ½ բէնա հաշուելու է :

Օրինակ . — 50/0 £. 16. 12. 8ին վրայ = շիլին 16 բէնա 7
 կամ £. ½ = շիլ. 16. շիլ. ½ × 6 = բէնա 7,2
 50/0 » 42. 18. 10ի վրայ = 42, 11½, կամ
 » ½ = շիլ. 42. շիլ. ½ × 6 = բէնա 10,80

Երբ սղերլինին թիւը տարազոյգ ըլլայ, կրնաք զոյգի վերածել 1 սղերլինը (20 շիլին) աւելցնելով շիլինին վրայ. —
 Օրինակ. — £. 43.8.5 = 42.28.5, որուն 5⁰/₁₀ն է
 42.17 = £. 2. 3. 5

2¹/₂ ⁰/₁₀ը գտնելու հաշիւն աւելի դիւրին է :

1. — Սղերլինի վրայ. — Շիլինին թիւն հաւասար է սղերլինի թուոյն կէսին :
2. — Շիլինի վրայ. — Շիլինի տասներորդն 3 ով բազմապատկելով բէնային թիւը կ'ունենանք :
3. — Բեկայի վրայ տարբերութիւնն այնքան աննշան է, որ չարժեք 3¹/₂ ⁰/₁₀ն առնել. —

Օրինակ. — 2¹/₀ ⁰/₁₀ £. 18.8.3ի վրայ = շիլ. 9 բէնա 2
 » » » 158.18. 6ի վրայ = £. 3.19.5 կամ
 £. $\frac{18}{2}$ = շիլ. 9. $\frac{8}{10} \times 3 = 2,4$
 » $\frac{158}{2}$ = » 79. $\frac{18}{10} \times 3 = 5,2$

Երբ սղերլինին թիւը տարազոյգ ըլլայ, կրնանք զոյգի վերածել: Հաշիւը նոյն է. —

Օրինակ. — 2¹/₂ ⁰/₁₀ £. 153.18.3ի վրայ = £. 152.38.3
 = շիլ. 76, բէնա 11 = £. 3. 16. 11

Տասն անգամ փորձելով այս մէթոտը, կրնաք գումարի մը 5 կամ 2¹/₂ ⁰/₁₀ը գտնել, առանց հաշիւի:



ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Ի Տ Ա Լ Ի Ա

Բ.

Աշխարհագրական դիրքը. — Ժողովուրդը. — Երկրագործութիւնը. — Հանքային հարստութիւնը. — Ճարտարարուեստը. — Վաճառականութիւնը [Արտածում, ներածում]. — Հաղորդակցութեանց մամբաները. — Թղթատարութիւնը. — Գրամն ու Գրամատունը. — Գաղթականութիւնները. — Առեւտրական նաւերը:

Յօրենք. — Թէպէտ Իտալիա տարին 50 միլիոն հէքտոլիտրի մօտ ցորեն կ'արտադրէ, բայց իր պէտքերուն չի բաւեր, եւ ափսոսած է դուրսէն ալ գնել: 1898ին գնած է 210 միլիոն ֆրանքի ցորեն:

Եզիպացորեն. — Իտալիա՝ Աւստրիայէն ետքը՝ մեծ քանակութեամբ եզիպացորեն արտադրող երկիր մ'է: Ամէն տեղ կը մշակուի, մանաւանդ Լոմպարտիոյ և Թոսքանայի մէջ: Գիւղացիներուն եւ աղքատ դասակարգին գլխաւոր ստեղծիքն է: Տեսակ մը խիւս շինելով կ'ուտեն:

Բրինձի մշակման եւ արտածութեան մասին Իտալիա Չինաստանէն յետոյ առաջին երկիրն է: Բօ գետին բերնի ծածաղուտ հողերը բրնձուտի վերածուած են բոլոր: Տեղական սպառումէն զատ տարին 12—13 միլիոն ֆրանքի բրինձ կ'արտածուի:

Ձիթեցի. — Երկրին կլիման շատ յարմար է ձիթենիի մշակութեան: Շատ տարիներէ ի վեր մեծ ջանքեր ու զոհողութիւններ կ'ըլլան ձիթենիի մշակութիւնն արդիւնաւորելու համար, բայց ի դուր: Mosca oléaria ըսուած ձձիները մեծապէս կը փնասեն անոր:

Գիցի. — Եւրոպայի ամէնէն շատ գինի արտադրող եր-

կիրն է Իտալիա, բայց տեսակի ու ճաշակի մասին Ֆրանսայի չի հաւասարիր: Կլիման տաք, չոր, միօրինակ ըլլալով, խիստ նպաստաւոր է որթատունկի մշակութեան: Ֆիլօքսէրայի եւ ուրիշ տեսակ հիւանդութեանց դէմ կոուելու համար կառավարութիւնը 10 միլիոն ֆր. ծախսած է: Գինեգործութիւնը սովրեցնելու համար հինգ դպրոցներ բացուած են:

Ալֆոլ. — Կառավարութեան դրած ծանր սուրքերուն պատճառաւ ալքոլի արտադրութիւնն հետզհետէ կը նըւազի: 1890 ին 200,000 հեքդոլտր արտածած էր. 1899 ին իջաւ 98,500 ի:

Միսսիոս. — Մենաշնորհի պատճառաւ Իտալիա ետ մընացած է ծխախոտի մշակութեան մէջ: Տարեկան արտադրութիւնն է 6 միլիոն քիլօ, որ չի բաւեր իրեն: Ստիպուած է տարին 15 միլիոնի ծխախոտ գնել դուրսէն:

Ճակնդեղ. — Իտալիա սկսած է մեծ զարկ տալ ճակնդեղէ շաքարի շինութեան: Արտադրութիւնն առ այժմ չի բաւեր տեղական սպառման որ 800,000 կենդինար է: Բայց հետեւեալ վիճակագրութենէն կերելի թէ քիչ ատենէն պիտի յաջողի ինք հոգալ իր պէտքը:

1880ին արտադրած է	200 կենդինար
1881ին »	1000 »
1882ին »	1900 »
1883ին »	3500 »
1884ին »	7200 »
1890ին »	11,500 »
1894ին »	21,000 »
1895ին »	34,000 »
1897ին »	37,000 »
1899ին »	38,750 »

Handwritten text at the top of the page, likely a library or archival stamp, including the name "Հայկական" (Armenian).

Գ Ի Ն

12 Տետրի՝ դրու 12 ԿԱՆՆԻԿ

Գաւառաց համար՝ իբր բոսի ծախս՝ 3 դրու 2 աւելի

Հասցէ

ՍԻՄՕՆ ՉԻՕՄԼԻԿԻՃԵԱՆ

Ի Խմբագրատուն «Բիւզանդիոն» Հայաստանի

Պատր Աշի ճաստիսի թիւ 23—25 Կ. Պոլիս

ԱՆՀՐԱԺԵՇՏ

Ամեն վանառականի, գրագրի, ուսանողի եւայլն.

معارف نظارت جليله سنك ۳۰۳ نومرولى و في ۱۶ تشرين اول
سنه ۱۳۱۶ تاريخلو رخصتنامه سيله طبع اولتمشدر

<< Ազգային գրադարան



NL0083828

